

ՅԱՆՈՆ ԿԱՆՈՆԱՅ ՄԱՆ՝

ՄՕՂԼԷՆ ՈՒ ԵՐԷՑ.

Երէց մը ու մօլլէ մը կեղին ընկեր.

Մօլլէն շատ գիտնական կեղի, խաւքի աշխրջի ամենալեզուից կը խոսկընայ:

Կուգան—կուգան, ձորու մը ըռաթմ կուգան.

Կու տեսին կաքաւ էդ ձորու մէջ զըբ-
գըպայ. երէց կըսայ.

— Ջան, ջան, ինչ անուշ ձէն մի կայ վե-
րէն.

Մօլլէն վըր էդ իրիցու կը ծրծղայ. երէց
կասայ.

— Դու յորի՛ն ծրծղացիր:

— Իսկի, դու ջան—ջան երեցիր, ընդուց
իմ ծրծղալ էկաւ:

Մէ քիչ տեղ էլ գացին, դուրիս (այս ան-
գամ) զոռապ (սկոտա) զըռզոաց. երէց ա-
սաց.

— Չո՛ւ, չո՛ւ, ինչ գարշելի ձէն մի կայ
վերէն.

Մօլլէն մէկ էլ ծըծղաց.

— Մօլլա՛ս ասաց երէց, բան մը կայ քու
տակը, կը ծըծղաս.

— Երէց, քո զրուցներ, ծաղր ա. էն էլ
հայվան էր, էն էլ հայվան, յորի՛ն էնոր «ջան»,
երբի, էնոր «չո՛ւ» էրիր.

— Էնի անուշ ձէն խանեց, էսի դառ ձէն
խանեց.

Մօլլէն մէկ էլ ծըծղաց.

Դարձաւ երէց—Մօլլա՛ս բան մի կայ իդա
ծաղրու միջ, ընձի յայնաւ.

Ասաց.— Կ'ատնիմ վախենամ իմ զրուցք դուս
էցգես, զիմ գլոխ ցաւցըցես.

— Մօլլա՛ս ասաց, էսա տեղ ո՛րը կայ.

Ասաց.— Ես էսա տեղաց դարաը չեմ.
մենք կերթանք Ախլաթ. եօթ թագաւորի տեղ
ա. քու լեզուն չկանի իսէ, զիս էցգես ի լե-
զու, իմ գլոխ ինի դաւայ:

Ասաց.— Գիցած էղիր, ես քեզի լեզու
չառնիմ:

Ասաց. Երէց, ես ամենա խաւքու լեզուն

կը խոսքընամ թէ զըրգըրան, թէ ինչ էնին.
չեղնի—չեղնի զրուցիս, զսա էնիս:

Ձերէց շատ էրգում կուտայ, կասայ

— Երէց, կաքաւ զըրգըրաց, ասաց, իրի-
ցու զլոխ կարա՛. հարուր դուռուշ փարայ կայ
մօս, առ գնա. դուռապ էլա զոաց, ասաց, մի
մօրի իրիցու մեղք ու արունք. հարուր փա-
րայ կայ մօտը, էնէլա տեր տ.

— Վայ զօրանան, զոռապ, ասաց երէց,
օղորդ օ հարիւր փարայ կայ մօտա, կանի
տամ նշանց:

Երէց զուր արախչին բերեց տակ, փարէն
խանեց միջէն.

— Մկայ իմացայ օ դու գիտնական իս,
ասաց երէց.

— Երէց, էս խաէն դուս չէցգես:

Գացին—գացին ի Ախլաթ. մօլլէն ուրնէ
կը վախենէր, ջոջ տուն չէր մանէր. գնաց
աղբաի տուն, էղաւ զոնախ: Երէց գնաց մէկ
ժողովուրդի մը մէջ քիսաւ. էս ժողովուրդը
Եանոն Կանոնայ մալի պախսը երեցին, երէց
էլա ականջ կէնայ.

Ժողովուրդը ասաց.

— Կեանք մարդ էղի, էսա Եանոն Կանո-
նայ մալ իմնայ, խանայ: Իրիցու լեզուն չղադ-
րաւ, զոմսեց զմօլլէն թէ, —Մօլլէ մի կայ
խը ծի ընկեր էղեր էկիր ա. էնի կեղի Եանոն
Կանոնայ մալ խանայ:

Էն զրուցք գնաց ընկաւ թագաւորի յա-
կանջ, զերէց զանչեց տարաւ.

— Երէց, ասաց, արի տեսնենք, մօլլէն
զո՛ր ա.

Ասաց. — Թագաւոր ապրած, խը ձի էկաւ,
մահլի մէջ կեղի գաի, առ արի:

Թագաւոր ճամբխեց, զրմօլլէն գտաւ,
բերեց:

— Կու զիմ, ասաց, դու Եանոն Կանոնայ
մալ գաիս թէ չէ զքու զլոխ կը զանիմ:

— Թագաւոր ապրած, ես ի՛նչ իմանամ
էղպէս բաները.

— Մօլլա՛ս յորի՛ն սուտ կը զրուցիս, քու
ընկեր երէց կասայ, երկու աշխար իրան մօտ
մէկ ա. իմալ էղի կը խանայ:

Մօլլէն կը դառնայ իրիցու վերէն, կա-
սայ.

— Հէյ կիտի պէպաթմ երէց, էն գաի

1. Խալապալ Խալապալով. գրի առաւ Ս. Հայկունի:

քո գլխի կտուելի մկայ զիսի չէցգէիլ պալի մէջ. իմն ու քու՛մ մնայ, բան չկայ:

— Թագաւոր: ասաց մօլլէն, քիչ մը ժամանակ տուր, երթամ պտտտիմ յիգամ:

— Չէ՛, ես մարդ չըմ թողի. կերթաս, կեղի օ դու փախիս:

Մարդ գրեցին մօլլի խեա, յերթան, պտտտին տեսին Եանոն Կանոնայ մալ դո՛ր առամ թալայ, տեղը նշանց տայ.

Մօլլէն պտտտելով գնաց Ալթուն թեփե-սի կայ Ախլաթ, առմ թալեց օ պէլի Եանոն Կանոնայ մալ Ալթուն թեփեսու մէջն ա:

Մօլլէն իշկեց օ Եանոն Կանոնայ մալ խանելու գլբմն քառսուն խամ էրինջ, քառսուն դէվաբեռ կորեկ, մէկ էլ մէկ դէվա-յի դաֆաս: Դարձաւ մօլլէն թագաւորի վե-րէն, ասաց.

— Կուգեմ քառսուն խաա էրինջ, քառսուն բեռ էլա կորեկ, մէկ դեվի դաֆաս, տանիս կորեկ էնտեղ ցփնիս ու մատաղ մոր-թիս:

Թագաւոր էլաւ ճամբխեց. Ալթուն թե-փեսուն կորեկ ցփնեց, մատաղ էրեց գերինջ-նեկ, մսեր դաշտի մէջ ցրուեց. մէկ դէվէն էլա մորթեց. մնաց զարտակ դաֆաս, մտաւ մէջ պախկաւ. դաւսէն իշկեց՝ երկնուց խաւ-քեր էկան, էկան լցուան էդ դաշտ, թռան իջան ջանդակներու վերէն. մէկ խրաման չե-ղաւ օ մէկը բերան տուէր էր, եան էն միս, եան էն կորեկին՝ կայնած կիշկեր:

Մէկ խաւք մէկա էրկու խաւքու թեի վերէն խեծուկ իջաւ էն դաւասի վերէն, հալ-պուտուր խաւքերու գլխաւորն ա. էս խաւք ասաց.

— Ժողովուրդ, իմ յապով կայներ էք, դէգա զիաֆէթ չուտէք:

Էն մէկը ասաց. — Ապա՛ պիլա քեզի խը-րամանք չկայ մեզի:

— Կեալօ՛ ասաց, դու մօրուց ծնուերիք, չուրի մկայ իմա զիաֆատ տեսերիք: — Չէ՛, քիչք տեսեր, տսին յըմենէլա:

Քերքեշ, լոպկուկ խաւք ասաց. — Թա-գաւոր ապրած, խաւքերու գլխաւոր, ես իմ րեսեր.

— Դո՛ր իս տեսեր, խարցուց մօտէն, էս-դէս զիաֆատ.

— Էլմէլ էս տեղ, այնի էստեղ էմ կերեր.

— Ի՞նչ յապով կերար.

Ասաց. — Էն գախ օ Եանոն Կանոնայ մալ էս տեղ պախեցին. այն զի իգա դէվի դաֆասի տակն ա, օր թէ դու նստերիս վե-րէն.

— Դէ, խրամեցէք, կերէք, ասաց ջոջուր խաւք:

Խաւքեր կերան պրծան, մօլլէն դաւսի մէջ լսեց յըմեն բան. էլաւ դուս, էկաւ թա-գաւորի մօտ ասաց.

Թագաւոր ապրած, կուգեմ քեզնէ խա-րուր խաա ճեհել մարդ, փետատ, թիակ:

Մօլլէն առաւ, գնաց.

Թագաւորը ժողովրդով գնաց (տեսնենք ինչ պաի փորեն, հանեն):

Մօլլէն դաւսի տեղ էտուր փորել, փո-րեցին— փորեցին, թալեցին, Եանոն Կանոնայ մալի դուռ բացուաւ. գցին իշկին օ ի՛նչ իշ-կեն, արծաթ, օսկի, աշխարհի մէջ ամենա-թանկ բան լցուկ ա ինե:

Թագաւորի աչք առաւ ինե, ասաց.

— Աշխարհ դատել, բանել չեղի, էսի յա-ւիտենական հերիք ա. ասաց՝ մօլլայ, ուզէ տամ քեզի.

Ասաց. — Ի՛նչ ուզիմ, էղի, իրիցու գլխ-իս կշեռքով օսկի տուր ընծի.

Ասաց. — Մօլլա, էգի ադէկ բան մը չէ-րիր.

Ասաց. Չէ՛, օր պաի տաս, իրիցու գլխու կշեռքով կուգիմ.

Ասաց. — Իրիցու գլխու կշեռքով քիչ ա ի՛նչ ա էնի.

Ասաց. — Թէ քիչ թէ շատ՝ իրիցու գլխի կշեռքի կօրայի կուգեմ:

Իրիցու գլխի կտրին, գրեցին թարաղու մէկ աչք, ինչ դուր օսկի, արծաթ կէր ի գե-տին, հա լցին մէկէլ աչք, իրիցու գլխի մնաց ի գետին, մալ կելլի ու կը բանձրնայ:

Թագաւորն ու ժողովուրդ զարմայան. — Մեր մալէ գնինք վերէն, չընք պրծնի, ասին:

Մօլլէն տեսաւ օ ժողովուրդ մէկ թուռ-լում էղաւ, ամէցան մօլլից. մօլլէն ճանկ մը հող առեց, թալեց իրիցու էրկու աչք, գորի-սի օսկիք մնաց ի գետին, իրիցու գլխի թաաւ կայնաւ: Դուրիս օսկիք խանեցին, խանեցին, մնաց մէկ օխայի զագար.

— Մօլլայ էգի ի՞նչ պախ ա ի՞նչ գաւի ա ի՞նչ էրեցիր մէկնէ մեզի:

Ասաց. — Թագաւոր ապրած մարդու աչք աշխարհի մալից չկշտանայ, իլահի քի էրեց. մէկ ծանկ հոգ մարդու աչք կը կըշտացու. իմալ օ իրիցու գլուխ դըռ ինչ չտեսեր էր՝ խոյ օ թալի կշտացաւ, թեմբըցաւ, մկայ Եանոն Կանոնայ մալից ընձի խակի պէտք չէ, աշխարհի մալը աշխարհ կը մնայ:

— Մօլլայ աշխար կը դըրըպի օ օսկի կու. նենայ, դու ինչ զրուցք ա կենես:

Ասաց. — Աշխարհի վրայ Եանոն Կանոնայ մալից շատ դժուր կայ, էնի ի՞նչ տարաւ. մալ մացեր ա ընկեր լիտան, պաի մնայ էլման աշխարհ Մալ մնայ ինքը գնաց:

Թագաւոր ասաց. — Հարամ էգի Եանոն Կանոնայ մալից մեզի. դուռը էլման պաի փակուի, մալ մնայ տեղ:

Մէկ էլ էլան Եանոն Կանոնայ մալի միջից, դուս փակեցին. Հալա էն փակուին ա հալա էն փակուի, բան մը չտարած ա միջէն:

Եանոն Կանոն կըրայր էն էղած. Աստուածութեն էնգոնց մալ օսկի դարձուց, գրուի ա՛ էդոնց մալ պաի մնայ տեղ, չուրի աշխարհի վերջին Նոնաու կալի մէջ պըտի բաժուի:

Եանոն Կանոնայ մալ Ախլաթ, Ալթուն թեփեսու տակն ա Ախլաթ եօթ թագաւոր նստեր ա եօթ գիր էլա աւերեր ա. էն մէկ Մհերի աւերուին ա մկայ լէ Բաֆր — Կալասի կասեն:



ԺԱՆՏԱԽՏ

Ժանտախտ է յայտնուել կրկին, և ոչ միայն հեռաւոր Հնդկաստանում, ուր երբեք չէր վերջացել այն և այժմ նոր սաստիկութեամբ կոտորածներ է անում Բոմբէյի շրջակայքում, այլ նոյն իսկ Եւրոպայի գլխաւոր կեդրոններից մէկում, Վիեննայում, ինչ-

պէս և Սըմբրզանդի նահանգում: Վիեննայում, ինչպէս հաւատացնում են նա չի կարող կլնել Փրանց-Խոլէֆ հիւանդանոցի պատերից, ուր յայտնուեցաւ և մնաց մինչև այժմ՝ մի քանի զոհեր միայն տանելով: Առաջին զոհն եղաւ հիւանդանոցի սպասաւորնէ, ըից մէկը որ ինչպէս կրեւում է անգղղը կ'անուել, ժանտախտի ըստ իշխերի հետազոտութեան համար կատարուած փորձերից յետոյ բժշկական գործիքներ կամ ամաններ լուսնալիս մանաւանդ որ վերջին ժամանակ յաճախ արած վիճակի մէջ է եղել: Երկրորդ զոհը բժիշկ Միլլէր՝ վարակուել է այն պատճառաւ, որ առաջինի հիւանդութիւնը պարզուելուց յետոյ այլ ևս թոյլ չի տուել ոչ ոքի մօտենալու, փակուել է նորա հետ մի փոքր սենեակի մէջ, ախտահանութեան և հիւանդին խնամելու գործն ինքն է կատարել՝ իմիջի այլոց ապակով քերել է պատերը ցրիները հեռացնելու համար, և երեւի այդ պիտով բացիներ է ներս շնչել: Տեղական մասնագէտ բժիշկները հաստատում են, որ բազմաթիւ նպաստաւոր պայմաններ են պէտք ժանտախտով վարակուելու համար, ապա թէ ոչ այնպէս հեշտութեամբ չի դիպում նա ինչպէս սովորաբար կարծում են: Այժմ հարկաւ զգուշութեան ամէն տեսակ միջոցներ են ձեռք առնուած. վարակուածներին խնամող բժիշկն ու սպասուհիները հիւանդի մօտ մտնելիս ծածկում են դէմքն ախտահանակ բամբակից և շղարշից պատրաստած մի դիմակով, որի վերայ միայն աչքերի համար բացուածքներ կան և որ սցրուում է անմիջապէս հիւանդի մօտից ելնելուց յետոյ, այդ պիտով շնչողութեամբ վարակուելու առաջն առնուում է, որ ամենագլխին ծանաղարհն է:

Սըմբրզանդի նահանգում ևս ժանտախտըն առանձնացած է առ այժմ Անդով անունով տեղում, որ լեռնային դժուարամտայի գիրք ունի և հարեան բնակավայրերից բաժանուած է խոր ձորերով: Տեղական կառավարութեան ձեռք առած միջոցները բաւական չհամարելով, որ դէպի Անդով տանող բոլոր ծանաղարհները փակել է, հիւանդներին տեղաւորել առանձին բնակարանում, ախտահանութեան և բժշկութեան գործը կարգա-